թագաւորն զնա ծանեաւ և ասէ, չո՛ն կա-
տարէ՝ զի՞նչ յուզես աստ. և ձգեալ զձեռն
'ի թուրն՝ զի հարցէ զնա, և ահա պա-
տեալ էր, և հասեալ Զմշկիկն սպան զթա-
գաւորն. զայս փասն ա՛յն արար բորբորիան-
այն և կաթոռն, զի փարէր իբրև զՇամի-
րամ: Իսկ թագաւորն ծղնաւոր և առա-
քինի էր. և այսու կերպիւ թագաւորեաց
Զմշկիկն. բայց պահեաց զորդին Ռոմա-
նոսի: Իսկ հնազանդեցոյց զամենայն աշ-
խարհ բաց 'ի քաղաքէն Խամթայ, որ սպա-
նին զզօրագլուխ նորա. զոր եղեալ թա-
գաւորն 'ի Սամոսատայ՝ եկն 'ի վերայ Խամ-
թայ: Իսկ քաղաքացիքն սպանեալ էին
զԽասան զտէր քաղաքին, և քոյրն Խասա-
նին տիրէր քաղաքին. իբրև մօտեցաւ քա-
ղաքին, քոյրն Խասանայ ել 'ի վերայ պա-
րսպին՝ և ասէ ցնա, ո՞չ է քեզ ամօթ գալ
'ի վերայ կնոջ միոյ. իբրև գիտաց թագա-
ւորն՝ թէ՝ սեղեխ իւր էր՝ մինչ էր 'ի Զմշ-
կածակ, եթող զքաղաքն առանց քակե-
լոյ՝ զոր երդուեալ էր, և հնազանդեցան

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան